



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

6 հոկտեմբերի 2014թվականի

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ռ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Վ. Շովիաննիայանի
Ա. Պետրոսյանի

Ուսումնասիրելով «ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ի անհարական դիմումով գործը քննության ընդունելու
մասին հարցը,

Պ Ա Ր Ջ Ե Յ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝
«ԲԻԿՍԱ» ՍՊԸ-ն 12.09.2014թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով
«...սույն վարչական գործով ՀՀ վարչական դատավարության օրենսգործի 182-րդ
հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույթում բացակայում է ինչպես
լիազորության կամայական իրականացումը կանխելու երաշխիքները, այդպես էլ այդ
լիազորության ոչ իրավաչափ իրականացումը հաղթահարելու միջոցը և

իրավակիրառական պրակտիկայում դրան փրկած մեկնաբանությունը, որը գարբերվում է սահմանադրախրավական բովանդակությունից և հնարավորություն չի ընձեռում նոր հանգամանքներով գործը վերանայելու միջոցով ապահովել ընկերության խախոված սահմանադրական իրավունքի վերականգնումը..., ճանաչել ՀՀ Սահմանադրության 1, 3, 6, 18, 19, 92, 93 և 94-րդ հոդվածների պահանջներին հակասող»:

Դիմողը գրնում է, որ սահմանադրական դադարանի որոշումները չեն դարձել ընկերության իրավունքի դադարական պաշտպանության միջոց, քանի որ վճռաբեկ դադարանը, ապահովելով դադարավարության ոչ բնականոն գործունեություն, ոչ իրավաչափ է համարել իրենց բողոքում ներկայացված նոր հանգամանքի հիմքերը, և դրա հետևանքով սույն վարչական գործով կայացված վճռում բացակայում են վերաբննիչ և վճռաբեկ դադարանների կողմից արգահայտված՝ դադարական ակտերով պարճառաբանված իրավական դիրքորոշումները:

Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, դադարական կազմը գրնում է, որ գործի քննության ընդունումը սահմանադրական դադարանի կողմից արգահայտված՝ դադարական ակտերով պարճառաբանությամբ.

ա/ դիմումի և կից փաստաթղթերի, մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դադարանի՝ 2014թ մարտի 19-ի թիվ ՎԴ/3167/05/08 գործով՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման ուսումնասիրությունը վկայում է, որ վճռաբեկ դադարանին ուղղված ընկերության բողոքում որպես նոր հանգամանք վկայակոչվել է ՀՀ սահմանադրական դադարանի՝ 2013թ. հոկտեմբերի 10-ի թիվ ՍԴԴԿՈ/1-27 որոշումը, որն էլ վճռաբեկ դադարանի համոզմամբ՝ ՀՀ վարչական դադարավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ նոր հանգամանքի հիմք չի կարող հանդիսանալ:

Հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դադարանի դադարական կազմը վերոնշյալ ՍԴԴԿՈ/1-27 որոշմամբ անդրադարձել է՝ «ԲԻԿԱՎ» ՍՊԸ-ի՝ ՀՀ սահմանադրական դադարան ներկայացված անհապական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցին, որն էլ մերժվել է՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված հիմքերով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ուսումնասիրելով դիմումը՝ դադարական կազմը գրնում է, որ դիմոնդը չի ներկայացրել վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ պարշաճ իրավական հիմնավորումներ: Մասնավորապես, նրա

փաստարկները վերաբերում են վճռաբեկ դադարանի կողմից օրենսգրքի՝ վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափությանը, ինչպես նաև իր գործով կայացված դադարական ակտի իրավաչափությանը: Տեքստաբար, դիմողի փաստարկներն ակնհայտ անհիմն են և սահմանադրավական վեճ չեն առաջացնում:

«Հ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանադրական դադարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դադարանի վերջնական ակտը, սպառվել են դադարական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկարմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

«Սահմանադրական դադարանի մասին» Հ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված են անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Մասնավորապես, դիմում կարող է ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական այն անձը՝

- որն ընդհանուր իրավասության կամ մասնագիրացված դադարաններում դադարության մասնակից է հանդիսացել, եւ

- որի նկարմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիրացված դադարանի կողմից կիրառվել է օրենքի դրույթ, եւ

- որի նկարմամբ օրենքի վիճարկվող դրույթը կիրառվել է գործը լուծող վերջնական դադարական ակտով, եւ

- որն սպառել է դադարական պաշտպանության բոլոր միջոցները:

«Սահմանադրական դադարանի մասին» Հ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհադարական դիմում ներկայացրած անձը սահմանադրական դադարան դիմելու համար իրավասու սուրյեկտ չէ:

Մինչդեռ «Սահմանադրական դադարանի մասին» Հ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհադարական դիմումի ընդունելիության պարսպիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համագերագում Հ սահմանադրական դադարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայդրու առ այն, որ «Սահմանադրական դադարանի մասին» Հ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հարկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանա-

վորված խնդրո առարկա իրավադրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում:

Միաժամանակ, դիմողը նաև չի հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր սահմանադրական որ իրավունքն է խախտել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փասփի և վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև պարզաբանելուանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դարարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դարարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արգահայտած իրավական դիրքորոշման, անհարական դիմումն ակնհայր անհիմն համարելու հիմք է.

Բ/ բացի դրանից, դարարան կազմը գրնում է, որ դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապատասխան դարարական ակտերի արդյունք են, ինքուաբար, խնդրո առարկա իրավադրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն ներկայացնել վերոհիշյալ նորմի հակասահմանադրականության վիճարկմամբ: Վյսինք՝ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց:

Համաձայն ՀՀ սահմանադրական դարարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴՈ-21 որոշման մեջ արգահայտած իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դարարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դարարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

Ելնելով վերոշարադրյալից և դեկավարվելով «Սահմանադրական դարարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերով՝ ՀՀ սահմանադրական դարարանի թիվ 1 դարարական կազմը

ՈՐՈՇԵՑ.

«ՔԻԿԱՎ» ՍՊԸ-ի անհարական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

6 հոկտեմբերի 2014 թվականի
ՍԴԿՈ/1-15